ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԽՄԲԱՅԻՆ ՏՆԵՐՈՒՄ ԱՊՐՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ ԻՄԱՍՏԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

Հայաստանում

խմբային տներում ապրող մարդկանց իմաստալից մասնակցայնությունը համայնքային որոշումների կայացման գործընթացներում

հանդիպում-քննարկման ամփոփագիր

28 հուլիս, 2023 թվական

Funded by the European Union
Ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ամփոփագիրը պատրաստվել է՝

«Հայաստանում խմբային տներում ապրող մարդկանց իմաստալից մասնակցայնությունը համայնքային որոշումների կայացման գործընթացներում» ծրագրի շրջանակներում:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ Արեւելյան գործընկերության քաղաքացիական հասարակության դրամաշնորհի շրջանակներում:

Ամփոփագրում տեղ գտած դիրքորոշումներն արտահայտում են միայն Փոփոխության մոտեցումները, եւ պարտադիր չէ, որ արտահայտեն Եվրոպական միության տեսակետները:

Ամփոփագրից որեւէ հատված օգտագործելու եւ (կամ) մեջբերելու պարագայում համապատասխան հղում կատարելը պարտադիր է:

© Փոփոխություն
Երեւան 2023

2023 թվականի հուլիսի 28-ին տեղի ունեցավ «Հայաստանում խմբային տներում ապրող մարդկանց իմաստալից մասնակցայնությունը համայնքային որոշումների կայացման գործընթացներում» ծրագիրն ամփոփող հանդիպում քննարկումը:

Ավելի քան 30 մասնակիցներ հավաքվել էին քննարկելու տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների կայացման գործընթացում հաշմանդամություն ունեցող անձանց առջեւ առկա մարտահրավերներն ու օրենսդրական բացերը:

Այս ամփոփագրի նպատակն է ներկայացնել հանդիպման խոսնակների ելույթներն ու ամփոփել քննարկումներն ու առաջարկները:

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գոհար Խաչատրյանը ողջունեց եւ շնորհակալություն հայտնեց բոլոր գործընկերներին հանդիպմանը միանալու համար:

Նա հակիրճ ներկայացրեց 2023 թվականի փետրվարից ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումները, ծրագրի ընդհանուր ընթացքն ու հիմնական արդյունքները: Մասնավորապես՝ ներկայացվեց՝

- ⇨ խմբային տների եւ տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության փորձը,
- ⇨ կարողությունների զարգացումը խմբային տներում ապրող մարդկանց եւ անձնակազմի անդամների հետ,
- ⇨ հետազոտական զեկույցը, որը ներկայացնում է համայնքային որոշումների կայացման գործընթացներում խմբային տներում ապրող մարդկանց մասնակցության մարտահրավերներն ու լուծումները՝ հիմնվելով հոգեկան եւ (կամ) մտավոր առողջության խնդիրներ ունեցող անձանց փորձի եւ իրավական վերլուծության ու վրա:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ





Հանդիպման ընթացքում ներկայացվեց ծրագրի շրջանակներում մշակված հետազոտական զեկույցը:

Նշվեց, որ այս թեման Հայաստանում դեռեւս չի ուսումնասիրվել որեւէ հետազոտությամբ, ուստի հետազոտությունն ավելի շատ հետախուզական-բացատրական բնույթ ունի: Հաշվի առնելով նաեւ բյուջեի սղությունը՝ իրականացվել է սոցիալական հետազոտություն, որը նպատակ ունի նոր հետազոտական հարցեր վերհանել՝ հետագայում ավելի խորքային ուսումնասիրելու, գաղափարներ առաջարկելու ակնկալիքով:

Ընդգծվեց, թե ինչո՞ւ են շեշտադրվել խմբային տները: Քննարկվեց, որ հոգեկան եւ (կամ) մտավոր առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունն անհնար է ապահովել խնամքի եւ հոգեբուժական հաստատություններում, որտեղ անձինք մեկուսացվում են համայնքից, զրկվում իրենց իրավունքներն ու ազատություններն իրացնելու հնարավորությունից: Հենց այդ հաստատություններում է Հայաս-

տանում շարունակվում մեծ մասամբ կազմակերպվել հոգեկան եւ (կամ) մտավոր առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի տրամադրումը:

Միջազգային պրակտիկայում այս հիմնախնդրի լուծման եղանակն ապաինստիտուցիոնալացումն է: Այս համատեքստում Հայաստանում առաջարկվող հիմնական այլընտրանքային մոդելներից է խմբային տունը, մասնավորապես պետական քաղաքականությունը միտված է խմբային տան մոդելի ընդլայնմանը:

Ներկայացվեց, որ խմբային տունը համայնքահենք մոդել է, որտեղ աշխատակիցների գործունեությունն ուղղված պետք է լինի բնակիչների առօրյա կյանքի հմտությունների, ինքնասպասարկման կարողությունների զարգացմանը, ինչպես նաեւ անհրաժեշտ քայլեր ձեռնարկելուն, որպեսզի բնակիչներն անխաթար օգտվեն համայնքում առկա ծառայություններից եւ ապահովեն համայնքում բնակիչների ներառումը, եւ այդ առումով որեւէ արգելքներ կամ սահմանափակումներ չառաջացնեն:

ԱՐԴՅՈ՞Ք ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻ ՀԱՄԱՐ

Ստելլա Չանդիրյանն ու **Գոհար Խաչատրյանը** ներկայացրեցին այն համակարգային, իրավական եւ պրակտիկ խնդիրները, որոնք խոչընդոտում են հոգեկան եւ (կամ) մտավոր առողջության խնդիրներ ունեցող անձանց մասնակցայնությունը համայնքային որոշումների կայացման գործընթացում:

Այդ խնդիրները հասցեագրվեցին եւ լուծման հնարավոր եղանակներ ներկայացվեցին՝ հիմնվելով Հայաստանում գործող խմբային տների բնակիչների փորձառության, խմբային տների անձնակազմի տեսակետների, տեղական ինքնակառավարման մարմիններին ուղղված տեղեկատվական հարցման պատասխանների, ինչպես նաեւ միջազգային եւ ներպետական իրավակարգավորումների վերլուծության վրա:

Զեկույցի ներկայացումից հետո ներկաներն ուղղեցին իրենց հարցերն ու կիսվեցին պրակտիկայում առաջացող այնպիսի խնդիրներով, ինչպիսին են՝ մասնագետների զգայունության պակասը, պետական եւ մասնավոր ոլորտում առկա խտրականության դրսեւորումները:

Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության ներկայացուցիչ **Եղիազար Դավթյանն** ընդգծեց տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության ընթացքում մատչելիության ապահովման կարեւորությունն ու պատրաստակամություն հայտնեց շրջանառել զեկույցը Հայաստանի բոլոր համայնքներում:

Իր խոսքում **Ելենա Կիրակոսյանը** կարեւորեց զեկույցով վերհանված խնդիրներն ու ընդգծեց «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի պատրաստակամությունը խմբային տներին ուղղված առաջարկների իրականացման առնչությամբ: Միաժամանակ նա նշեց, որ լիահույս է՝ կիրականացվի նաեւ շահապաշտպան աշխատանք՝ զեկույցում նկարագրված համակարգային եւ իրավական խնդիրների լուծման ուղղությամբ:

Իրենց փորձառությամբ եւ մտքերով կիսվեցին նաեւ խմբային տների բնակիչները: **Գոհար Ոսկանյանն** ընդգծեց համայնքային ծառայությունների առկայության եւ բազմազանության կարեւորությունը:

Մասնակիցներն ընդգծեցին համատեղ ջանքերի ներդրման կարեւորությունը՝ հոգեկան եւ (կամ) մտավոր առողջության խնդիրներ ունեցող անձանց՝ համայնքային որոշումների կայացման գործընթացում իմաստալից մասնակցայնության ապահովման համար: